



ԽԱՂԱՐԱԹԵՐԹ

ԽՄԲԱԳՐԱՊԵՏՆ Է՝ ԳՐ. ԹՈՐՈՍԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱՊԵՏՆ՝ ԵՍ. ԳՈՒՆ, ԱՆ. ՄԵՆԵ, ԳՈՒՆ, ԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ.

ՀԱՄԱԿՐՈՂՆԵՐ՝ ՅԱՆՈՒՆ ԳԱՊԵՏԱՆ. Լ. ԼԱՐՆԵՆ, Ս. ԶԱՎԱՐՆԵՆ, ՄԵԶԻՆՈՍ ՀԱՅԱՍՏԱՆ.

(Փոփոխելի)

ՏԱՍՆԱԲԱՆԵԱՅ

Ես եմ «Շախիկ» եւ ինձ գաւ «Շախիկ» չպիտի նանչնալ : Իմ անունս պարտաւ ինչ շարունակ թերահալի պիտի առնէ : Իմ փառսս կանխիկ պիտի դրկէ : Ամէն մարդ պիտի է յարգէ եւ զիսուն վրայ նստեցնէ զիս : Ո՛չ ոք պիտի է աչք ընեւ իմ փառայիս, քո՛ղ աչք ունեցողին աւել իլլայ : Պէտք է իմ փառսս ձեռ կոկորդը անցընէ : Պէտք է նեղանալ, երբ ձեռ դրկած յօղումները չսպառնին : Պէտք է ձայն անգամ չնանչնէ եւ զիսուն վրայ դնէ, երբ ձեզի դէմ գրուի այս սխալներուն մեջ : Երբ զայս բարկանալ, պէտք է մեղանչէ : Եւ երբ մեղանչելու մօտ ըլլալ, պէտք է... քաջախ լինել :

Թիի 88

Տնօրէն Ռ. Սաղաեան

Հասցէ՝ Ղալաթիա, Գուրգուռու խան թիւ 7

ՀԱՐԱՐ 14 ՓԵՏՐ. 1909 ۞ در اعلامه غلطه قورشولى خاندە ۞

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԵ ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏԻ ՀԵՏ

Տեսնուի՞ր Սուլթանին հետ : Ի՞նչու չէ :

Սուլթանին հետ այսօր, միայն Դեսպանները, Իշխանները եւ Հիւմի փաշան չեն տեսնուիր :

Խմբագիրներն ալ կարեւորութիւն մը ունին եւ Սուլթանը որ խմբագիրները կը տեսնէ իր հոգիին պէս, բնականաբար խմբագիր չըլլար երբ իրեն ալ այցելութիւն մը տանք :

Մենք ալ մարդ ենք եւ Սուլթանը բնականաբար երկու հոգի չունի, եւ երբեք չընդունիր որ ինք երկու հոգի ունենայ :

Երկու հոգի կրնան կրնան ունենալ. ա՜ն ալ միայն ամուսնացած կրնան. իսկ այրերը շատ շատ կրնան ունենալ քանի մը երես : Բացառութիւն կը կազմեն այն այրերը որոնք շատ մը երեսներ ունին, ինչպէս նաեւ այն կրնան որոնք գրեթէ... երեք հոգի ունին :

Պիտի ըսէք անշուշտ թէ ասկէ առաջ ուր էիր, ինչու Սուլթանին անունը իսկ բերանդ առնելու կը վախնայիր, կարծելով որ քեզ պիտի ուտէ եւ հիմայ երբ Սուլթանի զինուորները հոս են, Մէսուտին Տօլմա Պազլէի առջեւ եւ Սուլթանը Սահմանադրական թագաւոր մը, կ'ուզես այցելել իրեն :

Շատ ճիշտ է :

Բայց հին օրերու մէջ ո՛րու քերնէն էր ինչեր որ երբեք ա՜նունը տար. մարդ ոչ թէ Սուլթանին երեսը, այլ երբեք ինչ երեսն իսկ տեսնելու համար Սիւլիօ Բիչին եւ Սամուէլ Միային հետ, Սուլթանին մահափորձին մասնակցելու էր :

Պոմպա նետեցի՞ր մը. քեզմէ ա՜ղկը չկայ. թէ՛ հերոս կ'ըլլայիր եւ թէ՛ մարդու երես կը տեսնէիր... Նէճիպ Մէհմետին շնորհիւ :

Տը՛, աը՛, աը՛, աը՛ :

Մարմինս կը փաշաղուի, մահերս կը ցցուին եւ խեղճ գլուխէս կ'երթայ. երբ սա վայրկեանին միտքս կուգայ, հին երբեք, օրեկէ չարիքի ու կոտորածներու անձրեւ մը կը

տեղար... առանց Սուլթանին գիտութեան, ինչպէս կ'ըսեն : Այդ ըսողները կ'ըսեն նաեւ թէ Սուլթանը շատ շնորհով մարդիկներէ չըջապատուած էր : Ամէնէն աղէկը Իզզէթ փաշան նկատեցէք եւ անկէջ անդին զայնք փայլաւոր ըլլալը :

Երբեք... Ո՛հ երբեք չեմ տեսնուիր զժողովն էր եւ ես կը կարծեմ թէ բոլոր Հայերուն համար միւս աշխարհին մէջ այլ եւս զժողով չի կայ :

Արդ Վիլհելմ կայսեր հետ երբ տեսնուեցայ բնականաբար կրնայի Սուլթան Համիտին ալ այցելութիւն մը տալ, որ իրեն ժողովրդական Վեհապետի դուռները բացած է այժմ մեր առջեւ :

Դռները բացած է ըսելու բացատրութեան ձեւ մըն է միայն. եթէ ոչ հիմայ դարձեալ ոչ երբեք զուտ ներքեւ բաց են եւ ոչ ալ պատուհանները. ճախարները իսկ զոյց են գա՛հնկեցութեան զրոյցն ի վեր... :

Մարդը կը վախնայ եւ իրաւունք ունի :

Թուրքիա է հոս. մէկ օրէն միւսը ինչեր կը պատահին :

Յուլիս 11ը ո՛րուն մտքն կ'անցնէր. բայց յանկարծ Թուրքիա մտաւ, ամէն հաշիւ տակնուվրայ ըրաւ, նոյն իսկ մեր Մեծ Բիթին հաշիւները, որ միտքը դրած էր արդէն Ազատութիւն տալ խօսելու, պօռնու, կանչելու, երգելու... բանտարկուած ժողովուրդին :

Անցեալ Ուրբաթ վրաս գլուխս կոկեցի. ամբողջեցայ. կտա՛ս պատրաստեցի, հազարութիւնս սօրի, վերջին հրաժեշտս տուի բոլոր ազգականներուս ու բարեկամներուս եւ խտրականութեան Ափրիկէ ճամբորդողի մը պէս ուղղուեցայ դէպ ի երբեք... :

Գուցէ չտեսնուիր զարմանալի թուի թէ՛ ի՞նչ պէտք այսօր վախնալու, կտակ պատրաստելու եւ հրաժեշտ առնելու :

Զարմացողները ապահովաբար

գաղափար չունին երթալիք տեղիս եւ ընելիք ճամբորդութեանս դժուարութիւններուն եւ փորձանքներուն վրայ, որոնց մարդ ամէն վայրեան կը հանդիպի, քանի մօտենայ այն արքայութեան որ... երբեք կը կոչուի :

Արքայութիւն : Հըմ... :

Արքայութիւնն ալ գացեր եկեր երբեք մէջ է մտեր :

Եթէ վերի արքայութիւնն ալ կը նմանի երբեք, հիմակունէ աւելի կը նախընտրեմ զժողով երթալ, քան արքայութիւն ուր շատ անգամ արքայներն չեն ընակիր :

Փորձանք բան է ինչպէս հին օրերու էլ. հիմակ ալ երբեք մօտենալու եւ փորձանքի մը դիմած ատեն մարդ արիւնք գտնուելու է :

Չեմ առնիք Սուլթանի պալատին ճամբան... :

Անունով պալատ, բայց բռնապետութեան բոյն էր իրականին մէջ, հոն ինչեր, ի՞նչ ոճիւրներ կը գործուէին կարգ մը շուներու կողմէ, որոնք թագաւորին հացը կուտէին եւ կը հաշէին... :

Երբեք... :

Եթէ հարկը տարուան մեռելի մը այս բառը արտասանէիր, աւելի խոր կը մտնէր գերեզմանին :

Եւ երեւակայել որ երբեք աստղ կը թարգմանուի :

Այդպէ՛ք երեւակայեցէք որ եթէ աստղերը ասանկ էին, լուսիններն ու արեւները ի՞նչ էին Թուրքիոյ մէջ :

Ու Թուրքիան օր ըստ օրէ կը յաւաքէր, կը գարգանար, կայսրութեան բոլոր անկիւններուն մէջ զարթոյններ կը բացուէին եւ մայրաքաղաքի բոլոր անկիւններուն մէջ աղբիւրներ... փողոցներ կը մաքրուէին. Հայեր կը ջարդուէին, Իւրաքան իրաւի կը յաշորդէր, Օրմանեան ականակուէր կ'առնէր, Սուլթանը իր հպատակներէն կը վախնար, Մէսուտին դեռ Տօլմա Պազլէի առջեւ կեցած չէր, Թուրքիոյ թերթերը Մէկ Մարդը միջեւ իսկ հրեշտակաբէ՛ր կը ներկայացնէին, Աստուծոյ ստուեր ամականներով պնակալէզութիւն կ'ընէին անոր, Մեղիկեր Բարբիլ մէջ մէկ մարդուն «կարմիր» ամականը կուտար, Պոլսը

խափէններու «Վաթան» էր, գողերը, մարդասպանները եւ ջարդարութեան կազմակերպիչները վէճիր, պալա եւ փաշա էին եւ համեստ ու պարկեշտ մարդիկ... Շէֆիք փաշա ինչիւր. միշտ երկրորդ կը յաւաքէր, եւ Սուլթանը կ'ուտէր, կը խմէր եւ քէյֆը կը նայէր եւ կը հրճուէր տեսնելով որ 32 տարիէ ի վեր Թուրքիան բաւական կոկած է : Արդէն ճիշդն ալ ան է. ամէն անոնք որ 32 տարի առաջ Թուրքիոյ քարտէզը տեսած են, գիտեն անշուշտ թէ ի՞նչ տեղ կ'երեւար քարտէսին մէջ Թուրքիան : Սահմանները ծուռ ու մուռ : Մինչդէռ հիմա կլորիկ, կոկիկ, «նօնուլը» թօրիկ կը նմանի :

Ու շնորհիւ Սուլթանին իր միլիտար հպատակները հանգիստ կ'ապրէին, կը խմէին եւ քանթի կը պսակէին եւ ամէն կողմ աստղի լոյսէ պէքսէն էր :

Ո՛վ որի՞. Թուրքիան աճող զինուորական էր, բայց ասոր հետ մէկ տեղ շնորհիւ փառախափին ո՛չ ոք կը համարձակէր պատերազմել Թուրք գահաւորին զինուորներուն հետ, որոնք սակաւակերութեան եւ բացօթեայ պայուսիւն Ա. մրցանակ կրնան առնել :

Շնորհիւ թագաւորին թուրք զինուոր չարքաշ էր օրը քայլի հաց մը ու ջորայա մը եւ Պայրամէ Պայրամ քիչ մը միս ուտելով Արդէն աղկն ալ ան էր. աւելին ոկրամուր թեւեւ կը վարժեցնէ զինուորը :

Բայց անոթի զինուորին քով կուշան ալ կար. սակայն անոնք անձնապահ բանակին զինուորներն էին եւ անձնապահ երկրպագն միշտ գերադաս է : Առաջինը Սուլթանին անձը պիտի պահպանէ, որ նուիրական է, իսկ երկրորդը այնքան նուիրական չէ, քանի որ եթէ նուիրական ըլլար՝ առատաձեռնօրէն չէր բաժնուեր :

Բայց ինչպէս գիտէք, Սահմանադրութիւնը անգամ կ'ըսէ թէ կայսեր անձը նուիրական է... մինչդէռ երկրին նուիրականութեան մասին երբեք բան մը չըսեր :

Ուրեմն բերանս խփեմ եւ խաժուր ինչ գործերու չխառնուիմ :

Ուրբաթ էր ինչպէս ըսի օրը եւ այդ օրը Սուլթանը կ'աղօթէր :

Թուրքիոյ մէջ տարին 365 օր գիշեր ցորեկ, ամէն ժամ ու ամէն

բոլոր չեմ գիտեր քանի միլիոն հոգի, Հայ, թուրք, օսման, չրեայ, և այլն, կ'աղօթէր Սուլթանին կ'հնայ, իսկ Սուլթանը միայն ուրբաթէ ուրբաթ:

Հին օրերու մէջ սանսիւն էֆ. ներք, այդ կերպ մը մարդամեքե- նաները, կը ստիպէին մեզի որ կոյա աղօթենք, վասն թանկագին կենաց և արեւշատութեան... Մէկ - Մար- դուն, առանց հարցնելու եւ վնաս ունելու թէ աղօթքի համար ժամանակ, սիրտ և միջոց ունի:

Անանկ որ Յուլիս 11 էն առաջ, լուր տալու համար չէին հրատա- րակուէր թերթերը, այլ... աղօթելու համար:

Ամբողջ թուրքիան տոճար մըն էր մեծ ու հսկայ և Սուլթանը Աստ- ուած: Այս բաներէն Սուլթանը տե- ղեկութիւն անգամ չունէր, միայն իր սանսիւնները... շատ ինչիկիսկար էին:

Եթէ ձեռքերնուն գար պիտի ըսէին որ հաց ուտելու, քնանալու, զբօսնելու, խմելու և խաղալու տեղ ... աղօթեցէք:

Եւ Յուլիս 11էն առաջ կ'աղօ- թէինք ու կ'աղօթէինք՝ իրեւ միակ զբաղում. աղօթք մը գոր չեմ գիտեր որչափ ընդունելի կ'ըլլար այն Աստուծոյն առջեւ... որ վերը նստած է:

Հասկցաք հետեւաբար որ շնոր- հիւ սանսիւններուն թուրքիոյ մէջ բոլոր կրօնքները մէկ Աստուած եր, բէք չէին ճանչնար և երկու Աստուած ճանչնալը... համարտէի թէ զքէնէ մը ունենալու չափ կարեւոր էր:

Անցայ Պէշկիթաշէն և ելայ զա- ուիվեթէն քաղաք քորճանքի և ինք- զինքս գտայ Երևանի Պալա- տին առջեւ, ուր ժողովրդեան մեծ հայրը՝ նոյն ինքն Սուլթանը Հալիս մղկիթ կը մեկնէր:

Երկու կողմին վրայ զօրքերը պարսպներ քաշած էին, չինական պարսպներ, անանցանելի, անխո- ցելի և անարկու:

Մերկ սուլթանը ամէն կողմը և լեցուն հրացաններ:

Օտարական մը նախ պիտի կարծէր թէ թուրքիա իր զօրքերը շարժման մէջ կը դնէ այդ օրը և մեծ պատերազմ մը ունի:

Մինչդեռ այդ բանը սովորական է Երևանի համար և ուր մէկ մար- դու մը համար 600,000 և աւելի հոգինոց բանակներ կը պահուին:

Ամէն մարդ հայր ունեցած է, սակայն ամէն հայր գոնէ մեր գիտ- ցածները, իրենց զաւակներէն եր- րեք վախճալու պատճառ չեն ու- նեցեր. ընդհակառակը:

Բայց թուրքիոյ մէջ գտնուող այդ Հայրը կ'երեւի իր զաւակներուն վրայ լաւ գաղափար մը կազմած չէ: Արդէն ամէն զաւակ խելօք ու խո- հեմ չըլլար, անոնց մէջ հանած վա- րածներ և մօրերնուն մասածը ծա- խողներ ալ կը գտնուին:

Ինչպէս Պ. Քրիստ Կամ Սիւլիս Րիչին մեր պատուական պօսպաճի բարեկամը, որ անառակ որդի մըն է և իր Հայրը աւելի լաւագոյն երկիր- ներ զրկելու թէեւ փորձ մը ըրաւ,

բայց եկու տես որ պղտիկ հաշիւ մը խանգարեց իրենց մեծ գործը և քիթին քիթը իսկ չարիւնեցաւ:

Չինուորներէն կազմուած չինա- կան պարսպին առջեւ կը կենամ, փոխ մը ուշադրութեամբ ինծի կը նայի թէ արդեօք Ֆեսալուն՝ մըն եմ և թէ արդեօք խնձոր ունիմ քովս:

Սիրտս դողի մէջ է սակայն, թէ՛ Սուլթանը պիտի հաճի՞ արդեօք ընդունիլ զիս իր ներկայութեան և ախտի պատասխանէ՞ հարցումներու:

Վիլհէլմ Կայսեր կ'ըզէ ընդուն- ուեցայ կը մտածեմ ինքնիրենս և մարդ մը որ Վիլհէլմ Կայսեր կողմէ ընդունուած է կրնայ յոյս ստանալ որ կ'ընդունուի նաեւ Սուլթանէն:

Ու ներս կը մտնեմ Երևանէն, երբ նոյն միջոցին վարչապետ Հիլմի փաշան և ներքին գործոց նախա- րար Հիլմի փաշան (երկօրեան ի մարմին մի) դուրս կ'ելլէր Սուլթա- նին կողմէ նուիրուած կիստիլի մի- լէն ցոյց տալով Անճաւ Րիզային, որուն բերնին ջուրերը կը վաղէր ի տես... կիստիլի միլիէն:

Հիլմի փաշա ժիլիս ինծի ալ ցոյց տալով կը խնդրէ որ իր ժիլիս Դա- ղիլի մօտաւոր մէկ թիւին մէջ ունե- լամ ընեմ և Սուլթանը գովեմ քիչ մը այս առթիւ:

Վայրկեան մը ետեւէն կը նայեմ այսինքն թուրքիոյ ետեւէն, քանի որ թուրքիոյ սանձը այդ մարդուն ձեռքը տուեր են և այդ մարդը թուրքիոյ նայելու տեղ իր ժիլիս կը նայի և գոցէ իրեն համար աւե- լի կարեւոր է ժիլիս... թուրքիայէն: Որովհետեւ ժիլիս իրն է. իսկ թուր- քիան ո՛չ մէկունը կամ... ամէնուն ալ:

Վերջապէս մէկ ժամ վերջը տ- րարողագետի մը միջոցաւ կը յաջո- ղիմ Սուլթանին քով մտնել, այն Սուլթանին որուն ձեռքը պաղին Տօթթ. Տաղաւարեանն ու Յալիս Պա- պիկեանն, ի նշան որդիական խո- բին հպատակութեան:

Սուլթանը ոտքի վրայ է և ու- ըսալ:

Կը խոնարհիմ ու կը կենամ:

Նստիլ չկայ, որովհետեւ նախ որ աթոռ չի կայ և յետոյ Երևանի մէջ նստիլը խստիւ և բացարձակ արգիւ- ռուած է:

— Ինչ կ'ուզէք, հայրենակից, և ո՞վ էք:

— Ո՛չ նշան և ոչ ալ ընդալի կ'ուզեմ Տէ՛ր Արքայ, իսկ գալով ինքնութեանս՝ ես ընկեր կ'իկոն եմ...

— Փա՛ռք Ալլահին, փա՛ռք մեծ Մարգարէին, անաւանիկ մարդ մը որ ինձմէ ո՛չ նշան և ոչ ալ ընդալի ուղեւու եկած է: Դուք ըսե՛ք է ըն- կեր կ'իկոն էք...

— Պատիւը ունիմ Տէ՛ր Արքայ միւսնոյն ատեն ըլլալու Գուրչունի ու Սանի Կայսրութեան նախագահը:

— Վայ, մեր թագաւորութեան մէջ ուրիշ կայսրեր ալ կան. չէի գիտեր. ո՛ւր է ձեր կայսրութիւնը և ո՛րն է մայրաքաղաքիդ:

— Յուլիս 11ին հաստատեցինք Տէ՛ր Արքայ, մեր կայսրութեան սահ- մաններն են՝ արեւելքէն՝ Ոսկեղջիւր,

արեւմուտքէն՝ Թիւնէլ, հիւսիսէն՝ Պալլաք Բաղար և հարաւէն... իւզի տակաւներ. մեր մայրաքաղաքն է թիւ 7 սենեակը:

— Բայց անկա՛խ էք Պուլկարիոյ պէս...

— Ո՛չ, մենք կախուած ենք. բայց միտք ունինք ասկէ վերջ ալիս չկախուելու. որոշեցինք մէկ քանի օրէն ուրիշները կախել... եթէ կախ- ուողներ գտնենք:

Ինչ կ'ուզէք և ինչո՞ւ եկաք ուրեմն. էնթէլլիո՞ւ ընել կ'ուզէք, շա՛տ լաւ, բէք ձեր հարցումները, բայց կ'աղաչեմ քիչ մը հեռու կե- ցէք և քիթս մի՛ մանէք...

— Ինչ է, Տէ՛ր Արքայ, ձեր կարծիքը Սահմանադրութեան մա- սին... պիտի մնայ թէ ոչ:

— Պիտի ջանանք որ մնայ. իսկ եթէ շա՛տ զօր ընենք և չուզէ մնալ և եթէ ստիպողական գործ մը պատ- րուակելով մեկնիլ ուզէ, օձիքէն չենք կրնար բռնել և կը ձգենք որ երթայ: Կիտեմե ուղարկար օլտուն: Մնացողը մեր գլխուն վրայ տեղ ունի:

— Հայերը կը սիրէ՞ք Տէ՛ր Արքայ:

— Օ՛հ ի հարկէ, ես միշտ ասում եմ և հէնց էս րոպէիս ասում եմ ու պնդում եմ որ Հայերը շատ հեղ, գառնուկի պէս ժողովուրդ են և պէտք եղած ատեն իրենց կենքը կը զոհեն... սօքային տակ. Սիրում եմ Հայ Ազգին. էլի ես Օրմանեանի միջոցաւ էնքան բարեւ ուղարկել եմ... Հայ Ազգին, որ ուրախ է կարծեմ իմ բարեկեցիկ իմ բարե- ներ... փոր են կ'առնան:

— Ինչէն էր Տէ՛ր Արքայ, որ 300,000 Հայեր Քրիստոսի Գէ թուա- կանին մեկնեցան այս աշխարհէս...

Ըսնի կերպով:

— Քրիստոսեայ մարդիկ էին և շատ կը փախալէին Քրիստոսի երեսը տեսնել. հետեւաբար մեր Կամա- րիլան պատշաճ դատեց զանոնք «էնդի դէմը» զրկել:

— Քոմիդէն կը սիրէ՞ք, Տէ՛ր Ար- քայ:

— Կը սիրէի, բայց...

— Բայց...

—

— Իրաւ է որ 40,000 ոսկի տալ տուեր էք ձեր զաւակներէն մէկուն:

— Այո՛, պէտք ունէր. ինչ կ'ըլ- լայ. տէրութեան փարանի՛մս է. իմ փարաս ալ իմս է... Արդէն 40,000 ոսկիին խօսքը կ'ըլլայ. տղուս հա- մար, անկեղ ճեղ խաղաղի է:

— Ո՛րը կը սիրէք, Քեամիլը թէ Հիլմին...

— Հիլմին լաւ է. ատոր համար ժիլի մըն ալ տուի. Հիլմին ազէ- կութիւնը աս է որ խօսքի կը պառ- կի և քանի մը ամիսէն կրնայ իմ տիւտիակս չալել:

— Մամուլը սեղմել կ'ուզեն Տէ՛ր Արքայ... համարի՛մ էք...

— Բնա՛ւ. 32 տարիէ ի վեր սեղ- մեր են եղեր և ես բնաւ սե- ղեկութիւն չ'ունիմ... վա՛խ, վա՛խ, վա՛խ. ինչո՞ւ ինծի չէիք ըսեր, ես անմիջապէս կապերը կը թուլցնէի ձեր... մամուլին:

ԿԱՐԴԱՑԷՔ
ՍԵՐ Դ. ԷԶԸ
«Կաթոլիկ»ի եւ «Ծաղիկ»ի սիւրբիզը
սրամիտ եւ շունաւետ

— Աստուած երկար կեանք տա՛յ... Դահլեյցութեան զրոյցը ինչ էր Տէ՛ր Արքայ:

— Քօմիդէին խառնած ապուրը... ո՞վ գիտէ ինչ ընելու միտք ունէր. բայց Անրաբն ալ տեղը կենայ, ան ալ իզգեւտութեան է. բայց բաղդս նայէ՛ որ դարձեալ ես եղայ վաս- տեկողը...

— Ինչ է տարբերութիւնը Տէ՛ր Արքայ Մինաս Չերազին և Միհրդատ Հայկազին:

— Ինծի համար տարբերութիւն չունի, երկուքն ալ Հայ են:

— Գո՛հ էք Սահմանադրական թուրքիայէն:

— Օ՛հ, խնամ դո՛հ (Սուլթանը լալ սկսաւ) այնքան դո՛հ եմ որ ի նը- շան գոհունակութեան երեսփոխան- ները ճաշի հրաւիրեցի՝ դեռ շատ ճա- չերու պիտի հրաւիրեմ, թո՛ղ անհոգ ըլլան:

— Մեր հայ երեք երեսփոխանե- րէն ո՞րը կը սիրէք ամէնէն աւելի:

— Տօթթ. Տաղաւարեանը, շատ շնորքով մարդ է. գոհար է, գոհար. անյիշալար Հայերը միայն այդ երեքն են, բո՛ւն քրիստոնեաներ. ներողա- մտութեան լայն ոգի մը ունին: Ու- ըրախ զուարթ ճաշեցին, անուշ ըլ- լայ, և երան գացին: Իսկ թերթերը քաշքշեցին. իբր թէ Երևանի հացը արեւմտ է եղեր, Հայերուն արեւ- նոյլ չաղախուած է եղեր. Աստուծոյ սիրուն սա ձեր Տիկ. Նաաւանը ինչ կատարի կին է եղեր... բայց ինչ որ է, Աստուած բանը յաջողէ...

— Երևանը բաւական մաքրուե- ցաւ այն վատերէն որոնք կը խառնէին միշտ թուրքիոյ Սուլթանը, չէ՞ Տէ՛ր Արքայ:

— Ա՛խ վատերը, գայլին կորսուե- ցան ինծի պէս հպատակասէր և հայ- րագորով վեհապետ մը կը զրկէին իմ սիրելի զաւակներուս տեսութենէն:

— Ինչո՞ւ արդեօք Մեստուրիկն կե- ցած է հոս...

— Հա՛, Մեստուրիկն. ոչինչ, կարծեմ միտեայի որսորդութեան ե- լած է և մասնաւորաբար կը կարծէ կոր որ Տօլմա Պաղչէի առջեւ չա՛տ միտեա կայ...

Յանկարծ պաղ, պաղ քրտինք մը լուսնեւորուս վրայ սառեցուց ցցուած մաղերս, ակռաներս կախկախել սկը- սան. ոտքերս կ'իթոսեցան, ամբողջ մարմինս դողաց ու վախէս գետին ինկայ...

Որովհետեւ «Մէստուրիկ»ն յան- կարծ, գէթ այնպէս երեւցած էր ին- ծի, իր թնդանօթներուն բերանը դէ- պի երկաթ դարձուցած էր:

Կէս ժամ վերջը սթափեցայ և ինքզինքս գտայ գոց կառքի մը մէջ, որ ինծի Գուրչունի ու Սանի Կայսրութեան մայրաքաղաքը կը փոխադրէր:

Դ. Թ. ԹԱՐՈՍԵԱՆ

ԱԶԳ. ԹԻՎՆԱԹՈՒՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԱՌԱՅԱՐԱՆ

Ազգ. Թիվնաթոնները... ուրբաթ օրը նորոգուած էին:

Միայն չուր փոխուած էր...

Ես կը կարծէի որ գոնէ քիչ մը մարդ եղած են:

Ի՞նչ ապուշ եմ:

Մարդիկը առաջի Ազգին և առաջի... Մինաս Չերազի երդումը րած և ուխտած են որ Ազգ. Թիվնաթոններու ժողովը պիտի մնայ հոն՝ ուր որ էր Մայր եկեղեցիի գումարուած նիստի միջոցին:

Եթէ Սատուած կամենայ և եթէ Ռէթէոս Թագէտսեան... անդիի աշխարհէն լարեհաճի այս կողմ գալ, այն առեւն 0/0 և 0/0 Ազգ. Ժողովը պիտի ելլէ սա... անեկանելի օրա-կարգին մէջէն:

Ռուսը ըրին չըրին Բորթ-Արթու-րէն դուրս հանցին, Թուրքը Պոս-նա-Հէրսէքէն դուրս ելաւ, Սուլ-թանն ալ դուրս ելաւ Երևոյցէն, երբ կին մը տեսնեմ՝ ես ալ դուրս կ'ելլեմ... Ինքզինքէս և մեր Ազգ. Թիվնաթոնները, այդ անտանելի մարդիկը — բացառութիւն չեմ յար-գէր երբեք — վեց ամիսէ ի վեր օ-րակարգի մը մէջէն չեն կրնար դուրս ելլել:

Արդեօք կը վախնան դուրս ել-լելու:

Եթէ կը վախնան, Չօրապի պէս թող ընեն, որ դուրս ելլելու համար Դաշնակցական զինուոր մը կապեր է եր... պոյն:

Բայց Հայ Ազգը ի՞նչ պիտի ընէ Պարոն Թիվնաթոններ, կամ ի՞նչ կ'ուզէ որ ընէ:

Ինչու զրկեց ձեզի:

Արդեօք Ղալաթիոյ Խորհրդա-րանը ծուլարան է:

Ա՛յո՛, չէ. մենք ալ զիտանք և ձեզ հանգիստ ձգենք այլեւս ձեր... քեկալեկութեան մէջ:

Ի՞նչ ըրիք մինչեւ այսօր...

Բան մը ցոյց տուէ՛ք և ես խօսքս ետ առնեմ:

Իրեւ դործ քանի մը աթոռ շի-նեցինք և ցոյց տուիք որ Հայ Ազ-գին մէջ պոչ հեքիմներու սով եր-բեք չկայ: Արիստակէս Դասպարեանը մարդու կարգ անցուցինք, Ղազարոս Չպաքեանն ալ մէկտեղ, որ միշտ կը թքէ... Դամառ Բաթիպային պէս և այս ամէնէն վերջ դեռ կը սպա-սէք որ ես ձեզ մարդու տեղ դնեմ և իրեւ երեսփոխան խեր մը սպա-սեմ խեղճ Հայ ազգին համար...:

Ուրբաթ 17 էիք, այսինքն օրա-կարգին անցնելու համար ինքզինք-նիդ զօրաւոր զգալու չափ թիւ մը:

Չերազ ժողովը բացաւ...

Չանգալը հնչեց...

Երկու ճանճ թանճ օգին մէջ և Հորոյ 14 անգամ իր տեղէն ելաւ և նստաւ՝ Չօրապ... պարտուեցաւ. և դուր պոռացիք, կանչեցիք, իրարու գլուխ պատուելու աստիճան և իրարու վրայ քաշեցիք և եղեւ երեկոյ...:

Իրիկուն ըլլալը շատ դիւրին բան մըն է. բայց իրիկուն ըլլալով հա-շիւր նստա՛ք:

Ես նստայ հաշիւի մը և տեսէք թէ ի՞նչ եղաւ հաշուիս արդիւնքը:

Այո՛ + Ո՛ր = 00

Ո՛ր + Այո՛ = 00

Խօսք կ'ուզեմ + Խօսքը ուրիշիցն է = 00

71 երեսփոխան + 3 1/2 ժամ = 000

Արդ ինչպէս ըսի Հայ ազգը ձեզ-մէ խեր մը կ'սպասէ, ձեզմէ բան մը կ'սպասէ:

Շուտա՛մ էք և չէք գիտեր թէ ձեզի սպասող հայ ազգին ի՞նչ պի-տի բռէք...

Խեղճ թիվնաթոններ...

Ես ձեզի օգնութեան կը համարեմ և կ'առաջարկեմ որ սա վերի ար-գիւնքը փոսթայով գտնուի Հայուն շրկէք...

Գոնէ... հիշ եօգտան էի տիր:

×

ՅԱԶՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳՆ Է

1. Զանգակաձորային
2. Եփեմուք արտոնեցով
3. Առաջարկ Հմայեալի եպս-ի
4. — Թե ինչո՞ւ համար «Ինչո՞ւ»ն ի, ն չ, ո, ւ, ն գիրերով կը գըր-ուի:

5. — Ազգ. Հիւանդանոցի յիմա-րանոցի բաժնից ընդարձակումը:

ԽՄԱՅԻՐՆԵՐՈՒ

Հանդ թիւն և ԱԹՈՒՆ

ԱՊՏԱԿՆԵՐ

ՁԱՐԿ, ԲԱՅՑ ՄՏԻԿ ԸՐԿ՝

★★★ Կը հարցնեն թէ Գրիգոր Չօրապ ի՞նչ գործ կը տեսնէ Բա-լամէնթին մէջ: Մենք որոշ պատաս-խան մը չունինք, բայց սմանք կ'ը-սեն թէ՛ հոն նախ դէ՛մ կը խօսի և յետոյ վօլոյճաւս կ'ընէ: Շարաթ օր երբ ըսող թուրք երեսփոխանները կը հիանային Գաբրիէլ Նորատուեկ-եանի վրայ, որ Թուրքիոյ երկաթու-ղիներուն վրայ, խօսելով կը քննա-դատէր նախկին վարչութիւնը, միեւնոյն ատեն տեղեկութիւններ տալով, անդին Չօրապ բեմ կ'ելլէ և զէ՛մ խօսելու համար, զէ՛մ կը խօսի... մաքրելու համար հին հաշիւներ: Նորատուեկեանը պաշտ-պանելու համար չէ, ինչ որ կ'ը-սէ Մաղիկ. քանի որ այդ բանը չի կայ իր բնաւորութեան մէջ. բայց արդարութիւնն ալ ըսելու համար Չօրապ այդ տեղը ա՛ն է ըրեր: Բարամէնթի հաշիւներու լուացա-րան չէ երբեք...

★★★ Տեղապա՛ Սրբազանը եկաւ երէկ և Գում գարու գնաց: Ճամ-բան հին պատմութիւն մը միտքս ինկաւ: Ամառնային օր մը Գում գարուի կայարանը թռէնի կ'սպասէ վարդգէս: Արշարունի Սրբազան ալ հոն նստած է և բերնին ջուրերը վազցնելով կը դիտէ զբօսանքի գա-ցողները: «Ի՞նչ կը մտածէք հայրսորը կը հարցնէ վանի հերոսը»: — «Ոչինչ կը պատասխանէ, մենք ամուսնա-ցած չենք և չենք կրնար ձեզի պէս զբօսանքներու երթալ... կիներով» — Բայց ես ամուսնացած չեմ հայրսորը կը պատասխանէ վարդգէս: Ար-շարունի Սրբազան խոր հառաչանք

մը քաշելով սրտին խորերէն «... Բայց չէ՛ որ դո՛ւք կրնաք ամուս-նանալ...»

★★★ Սուլթանը 5 ոսկի և Կայս. Իշխան Եռսուֆ Իզդէտօղին՝ 20 ոսկի նուիրեր են Բերայի Հայ Աղքատա-խնամին: Ահաւասիկ տարբերութիւնը Սուլթանին և Իշխանին... Հայա-սիրութեան:

★★★ Տօքթ. Պալթա(ն) զար(կ) որ Բարիկ կը գտնուի այժմ, չենք գիտեր ի՞նչու լքեր է... Մարաշը և Բարիկէն հոս չի գար: Կ'ըսուի թէ Բարիկի մէջ ալ կին մը ունի, ինչ-պէս որ հոս կին մը ունի... Շիշլիի բարձունքը: Բազմակնութիւնը մեր մէջ արդեօք ընդունուած է: Եթէ ընդունուած է...:

★★★ Ֆերիդ-ըղլը և Շիշլիցիք մեծ ուրախութեան մէջ էին շարաթ զրկեր: Տեղւոյն Պօմօնթիի գարեջրա-տան տէրը իր պարտէզին չէնքին մէջ պարահանդէս մը տուաւ՝ դիմակա-ւոր և անդիմակ: Բոլոր Բանկալթիցի գեղուհիները հոն էին: Շատ մը անանկութիւններ տեղի ունեցաւ. առաւօտեան դէ՛մ բոլոր թուղթերուն գիները ինկան. այս անկումին հե-տեւելով կարգ մը կիներ ալ ինկան և... ելան:

★★★ Բերայի հայուհիները, երբ հայուն կ'ըսեմ պէտք է հասկնալ խումը մը ուսուցչուհի օրիորդներ՝ Էսահան վարժարանէն, քանի մը շա-բաթէն Բըթի Շանի մէջ ներկայա-ցում մը պիտի տան: Շարաթ օր Տիկ. Սիպիլի զեկավարութեամբ, խումը դարձեալ փորձ կատարեց և յաջող արդիւնքներ ձեռք բերաւ. ո՛չ մէկ այր կը թոյլատրուի ներկայ գտնուիլ այս գերասանուհիական նոր խումրին փորձերուն: Խումը նախ յուշարարուհի մը փնտտել է և չը գտնալով, հիմայ յուշարար մը կը փնտտէ, թէ եւ Շիշլիաշնալ ակնոցա-ւոր Պարոնի մը առաջարկուել է, բայց այս վերջինը մերժեք է, երբ Օր. Օր. դերասանուհիները պայման դրեր են որ երբ յուշարարի ծակին մէջ մտնէ, երբեք աչքերը վեր չառնէ: Ներկայացումին օրը միայն կիներ ներկայ պիտի գտնուին եղեր:

★★★ Կը խնդրուի Աղքատասէրի Տիկիններէն որ պարահանդէսին գոյա-ցած դրամին մեր սովեակներուն ինկած բաժինը հաճին չնորհել: Աղքատա-սէրի վարժարանին մասին ճառ մը պիտի խօսի ինք:

★★★ Անասուրի մէջ սաստիկ սով կայ հացի և սրամիտ յօգուած-ներու սով կայ և ա՛լ աւելի սաստիկ... Ալիիարի քով: Շարաթ օրուան Արեւելիքի մէջ երգիծաբանութեան այդ ասպետը? (Կրտսեմ Թէոդիկէ) առ ի չդոյն յօգուածի, իր բանա-գողած մէկ ոտանաւորը կլիցուցած էր ամենայն սրբյոթութեամբ: Այդ ոտանաւորը կարծեմ երկու տարի ա-ռաջ Մարեկի կաղանդի թիւին մէջ գրած էր Կալիքօ և տնկէ տնկելով Ալիիար գրած էր Արեւելեան Մամուլի մէջ. յետոյ հրատարակել տուած էր... Մասիսի մէջ և այսօր կ'արժանանայ երրորդ տպագրութեան... Արեւելիքի մէջ: Երբ կ'ըսեմ թէ սաստիկ սով

կայ... Ալիիարի գանկին մէջ, չէք հաւատար. կը խնդրուի Թուրք Կա-ռավարութեանէն որ դարձան մը խորհի:

★★★ Մանգուսի գեղարուես-տական նախարար (խմբագիր) Գառ-նիկ Թուղլաճիէֆ կը գրէ. —

«Սիրելի Բանագող,

«Ճշմարիտ CORVÉON հիմա է որ վիճակուած է ինծի — խղճա՛ վրաս, սիրելիս... Ի՞նչ կրնամ ընել Ստա-բազարի նման... տափ(ար)ակ քա-ղաքի մը մէջ... pas de blagues... բարեբաղդաբար ամէն օր 10 փարա ցնծալով Ծաղիկ կը կարդամ... վիլէլմ կայսեր հետ տեսակցու-թիւնը Gros-Claude-ը կը յիշեցնէ... Bravo! սիրելիս tu t'y mets bien! — Ատաբազարի դործարանները սպան-նած են տեղւոյս գեղեցիկ կամ փա-փուկ սեռը... quelle abomina- tion! Ինչ տգեղ սեռունդ յառաջ կրնայ գալ... կը տեսնես որ գե-ղեցկագիտական étudeներով զրա-ղելու համար հողը կը պակսի... Սականեանը եթէ չկրնաս տեսնել... պատճառը այն է որ ան... ծակը մտած է. թէ՛ ո՛ւր... գաղտնիք Բերայի. մինակ եմ... մինակ:»

Խեղճ գառնուկս և խեղճ Գառ-նիկս. ուրկէ՛ ուր գացիր Ատաբա-զար ինկար...: Աւելի աղէկ էր որ հորը խնայիր քան թէ հոռո: Շնորհակալ եմ զրկած Օր. Լավալիէրէզ որ սակայն Լուի Բէնդերու բերնին պատառն է: Լսեցէ՛ք դասերք Բե-րայի և... Գումգարուի, Գառնիկը մինակ է Ատաբազարի մէջ և կ'ող-բայ իր միակնութեան վրայ, կար-ծելով որ մենք հոս զոյգ ենք: Մեր ցաւակցութիւնները Գառնիկին:

★★★ Կիրակի գիշեր տեղի ու-նեցաւ Յրանքօ-Թըքական պատե-րազմը: Պ. Շիշմանեան յաղթող հանդիսացաւ, իսկ Յրանքացիք յաղ-թութեամբ փախան: Բաղմաթիւ մեռ-եալներ և վիրաւորներ մնացին բե-մին վրայ: Պատերազմական տու-գանքը կարելի չեղաւ վճարել: պատե-րազմին ներկայ էր նաեւ Սկիւտարի զինուորական հրամանատար Զրաք-դատէ Տիրան փաշա որ իր հետ բերած էր նաեւ իրենց տան կա-տուն: Չենք գիտէր թէ՛ այդ կա-տուն ալ Յրանքօ-Թըքական պատե-րազմէն բան մը հասկցաւ: Կը կարծուի որ կատուն Բըթի-Շանի տնօրէնութեան խնդրանքին վրայ բերուած է... մուկերու հաւանական յարձակումի մը չենթարկուելու հա-մար:

★★★ Սիամանթօ և Վ. Թէքէ-եան ճաշարանի մը մէջ.
— Բարեւ վաճան.
— Բարեւ Սիամանթօ.

— Ասացէք խնդրեմ, Տիրան Զը-րաքեանի երեկոյթին ի՞նչ հազուելով պէտք է երթալ. սե՛ւ հազուելու է անպատճառ:

— Անպայման:
— Եթէ չունիմ...
— Խնդիր չկայ, Հնչոկեաններու խղճմտանքը հազէ՛ք և գացէք:

ՎԱՂԸ «ՎԱՎՈՐՈՇ»

ԱՐՏՈՆԱՆԸ ԵՄ ԳՐԱՆԻՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ի. ՍԱՆՏԱՆ

«ԾԱՂԻԿ»-«ԿԱՎՈՐՈՇ»-Ի ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
(«ԲՈՒՋԱՆԴՐԱՆ»-Ի ԶԱՓ ԳՐԱԿԱՆ)

Ծաղիկ եւ Կավորոշ միասին, տարեկան, Պոլսոյ համար 80, վեցամսեայ՝ 45 դրուց։ Ծաղիկ կամ Կավորոշ՝ տարեկան 45 դրուց։

Ծաղիկ եւ Կավորոշ միասին, տարեկան, Գաւառի համար 100, վեցամսեայ՝ 60 դրուց։ Ծաղիկ կամ Կավորոշ՝ տարեկան 60, վեցամսեայ՝ 35 դրուց։

Ծաղիկ եւ Կավորոշ միասին, Արասահմանի համար տարեկան 52 ճր. վեցամսեայ՝ 13 ճր.։ Ծաղիկ կամ Կավորոշ՝ տարեկան 15, վեցամսեայ՝ 8 ճրանք։

Ոչ ոք զօրով բաժանողը կ'արձանագրուի։

Գաւառի կանխիկ չլիկոյները եւ վեր փառան ուսուցիչներ կ'անցնեն Է... կը խայտառակենք։

La Grande Fabrique

S. S. T. E. A. U.

1908-Ի ԶՄՐԱՆ ԵՒ ԱՇՆԱՆ

ՆՈՐՈՑԹՆԵՐԸ

Փ Ն Տ Ո Ւ Ց Ե Ք

Շ Թ Ա Յ Ն

ՎԱՃԱՌԱՏԱՆՑ ՄԷՋ

ՊՈԼԻՍ ԵՒ ՂԱԼԱԹԻԱ



ԽԱՅԵԼԶԱՍԵՐ ԿԻՆԵՐԸ

ՈՐՈՇԻ ԿՈՒՋԵՆ ՊԱՇՏՆԵԼ

ԻՐԵՆՑ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ

ՊԷՏԻ Է ԱՄԷՆ ՕՐ ԳՈՐԾԱԾԵՆ

ՃԵՄԱՐԻՑ

ՔՐԻՄ ՄԻՄՈՆԸ

ԿԻՈՋ ՄԸ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ կատարեալ չլիկոյ առանց գոյնի մաքրութեան Բոլոր այն տիկիները, որոնք հոգը ունին այս թանկագին ձիւղերը անկորուստ պահելու, պէտք է բացարձակապէս մերժեն գործածութիւնը այն աժանագին արտադրութիւններուն որոնք չունին իրենց աւելցումներով ծախու կը հանուին։ Գործածուած նախնական նիւթերուն ստորին տեսակէ ըլլալն է որ ներքին կ'ընէ այդքան աժան ծախել զանոնք։ Այս պատճառաւ նուազ ըստորին տեսակները պատրաստուած են մեղրամոմով կամ օճառով, որոնք օգին մէջ կը չորնան, եւ միւս տեսակները, աւելի վտանգաւոր մորթին համար, կ'պարունակեն այն ստակ ճարպեր որոնք զբոխին եւ քիչ ատենէն առաջ կը բերեն անդարձանելի կարծրութիւններ եւ խորշոմներ։

Միայն ՔՐԻՄ ՄԻՄՈՆԸ հնարուած 1860ին, զուտ նշայի կլիստիքով բաղադրուած՝ առանց ո՛ր եւ նիւթի, իրապէս առողջապահական արտադրութիւն մըն է։ Բոլորական աշխարհի մէջ բոլորվայելցասէր կիներէն ընդունուած է եւ նոյն իսկ իր անհուն յաջողութեան պատճառաւ է որ բաղմամբ կը զննուի նմանութիւններ երեւան կ'ելլեն ամէն օր։ 1900ի տիկներական Արուեստահանութիւն մէջ սորձանացած է Ոսկի Միտալի

Ի հարկէ ՔՐԻՄ ՄԻՄՈՆԸ գինը աւելի բարձր է կեղծ պատրաստութիւններու գինէն եւ ասոր պատճառը իսկապէս իր նախնական նիւթերուն աղնիւ տեսակէ ըլլալն է, որովհետեւ բոլոր ծախողները կը խոստովանին թէ հակառակ անոր համեմատաբար բարձր գնոյն՝ նուազ կը չափն նմանօրինակ ուրիշ տեսակներու վրայ։

Բնաւ մի վարանիք ուրեմն պահանջել ճշմարիտ ՔՐԻՄ ՄԻՄՈՆ միշտ լաւ ուղարկութիւն ընելով վերի վաճառանին եւ յաւելած երիտասարդ ու թարմ պիտի մնաք, մինչդեռ ձեր դրացուհիները, պիտի պարտաւանդ ջաւելով իրենց սխալ խնայասիրութեան համար։

ՄԵՐ ՍԻՆԴՐՈՇԸ
ՍՐԱՄԻՏ ԵՒ ՇԱՀԱՒՈՐ

×××××××× Ի՞նչ տարբերութիւն կայ հին քեթիմի Յարութիւն Ալփիարին եւ նոր քեթիմի Յարութիւն Ալփիարին միջեւ։ ××××××××

Պոլսոյ համար շաբաթ մը պոյմանաժամ, գաւառի համար՝ երկու շաբաթ։ Է՛ն ապուր, Է՛ն կարճ եւ Է՛ն սրամիտ պատասխանը տուողը պիտի ստանայ իր տուգինն մը յասակարք, բարդ-բազալի մեռով։ Երկրորդ մրցանակը շահողը՝ կենտուգինն։ Պատասխանները կը հրատարակուին շաբաթ օրերը, իսկ հարցումները կ'ըլլան երկուշաբթի։ Պատասխանները պետք է պրկուին մինչեւ ուրբաթ օր։ Նոյնպէս գաւառներէն երկու շաբաթուան պայմանաժամով։

Գուրչունցի խանի կայսրութեան մասնաւոր եւ միակ լուսանկարիչն է

ՄԻՄՈՆ

414, Բերա, Շիշակ-Ճամբայ, 414

Մեր Ա. Է. Բ. մրցանակները շահողները, պիտի երթան հոն լուսանկարուելու։

Ուրեմն, Տիկիներ, Օրիորդներ եւ Պարոններ միտքերիդ սրեցէք եւ պատասխանեցէք։

Ամենէն սրամիտ պատասխան տուողին լուսանկարը պիտի հրատարակենք մեր քերթին մէջ։

ԾԱՂԻԿ-ԿԱՎՈՐՈՇ

ՎԵՃԱԿԱՆԱՆՈՒԹԻՒՆ

ԿՏՐՕՆ 37 ՓԵՏՐ. 17 1909

ՓԵՏՐ. 15 (Ը. Ե.) ՎԻՃԱԿԱՆ

Հանութեան համար մաշակցելու իրաւունք։

Անա՛ քսան (20) Էժիպէտի Թիւերը

25195	212371
54777	212372
75862	212373
78987	212377
78988	212379
106602	271039
106605	286463
106607	334229
127106	334230
152940	334231

ՀԱՅ ԶԻՆԱՎԱՋԱՌ ՂԱՍԹԻՈՅ
ԶԱՐԵՅ ՊԵՆԿԵԱՆ

Ուղղակի Ամերիկայէն բերել տուած եւ ամենաբարձր գէնքեր, վաճառելի կանխիկ եւ անասկան վճարումներով։ Դիմեցէ՛ք Ղալաթիա, Գաւառի քաղցրիկ կից քիւ 57 վաճառանցը։

ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ
ՇԻՇԵՐ
(Verres pharmaceutique)

Դեղարաններու եւ դեղօրէից վաճառականներուն համար մասնաւոր շինուած շիշերը մինչեւ հիմա Հրեայ վաճառական մը մօտօք ըրած էր։ Այժմ ուրախ ենք յայտարարելու որ տիար Մկրտիչ Պողոսօֆ (Աչըր Էֆէնտի խան, թիւ 27 գրասենեակը) ձեռնարկած է այս գործին եւ ունի ճոխ ու այլազան մթերք մը այդ կարգի ամէն կերպ շիշերու եւ կարող է մրցիլ ամէն կերպով։ Վստահ եւ ապահով ենք որ թէ՛ Պոլսոյ եւ թէ՛ գաւառի մեր բոլոր Հայ դեղագործները եւ ճոկիւքները պիտի փոխան իրենց գնումը ընել այս Հայ եւ այս ճիւղին մէջ մէկ հաստիկ անստրական տունէն, քաղցրեղուն համար Հայ ձեռնարկուն որ միւսնոյն ատեն ամանութիւնը ընտրած է իրեն։

Անկարելի է որ ընտանիք մը առանց կտրի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տագնապի աղբիւր մըն է։

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԵՐ

Հայրաթիւ ԳԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ The Singer Manufacturing Co

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամէնէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ գիրագործածելին ըլլալուն՝ բոլորվանգէ աշխարհի մէջ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ։

Ձեռքի, ոտքի, ու ոտքի եւ ձեռքի միանգամայն

մեքենաներ կը գտնուին։

Սինկերի մեքենաները կը ծախուին միայն Սինկեր Բնիքներու

վաճառատանց մէջ։

ԲԱՐՈՒ. 1. Մեծ փողոց, Պօն Մառշէի գէմ, Թ. 343 եւ 343 կրկին.

2. Մեծ փողոց, Կալաթիա Սէրայի Լիսէին գէմ.

ԿԱԼԱԹԱ. 1. Սինկեր խան, Թիւնէլին հոտել.

2. Գաւառի քաղցր, Թիւնէլին կայարանին գէմ.

ՊՈԼԻՍ. 1. Սուլթան Համամ, Թ. 2

2. Սուլթան Պալատ, Թիւնէլին կայարանին գէմ, Թ.

ՍԵԻԲԵՍԷ. 2 արք. Պոլսոյ, Թ. 120.

ՇԱԲԱԾԱԿԱՆ ՄԱՍՆԱԿԱՐՈՒՄՆԵՐ

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կատարեալ երաժիշտութիւնը։

Մասնաւոր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ։

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ Փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղզուրի տունը։